ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ – 18/4

ք. Երևան «15» «02» 2018թ.

ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Մ. Մինասյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ալեքսանյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ծրագրային ապահովման սպասարկման ծառայությունների** (Պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի մշակումն ապահովող ծրագրային գործիքի սպասարկման ծառայություններ) մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 7 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 42000000 (քառասուներկու միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն	«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ
ՀՎՀՀ 02505511	ք. Երևան, Շիրակի օք. 2-րդ շենք, բն 28
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 9000011556652	Հ/Հ 1630182198038
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 15 » « 02 » 2018թ. կնքված
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ – 18/4 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
h/h	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակը	Մատուցման	
						Հասցեն	Ժամկետը
1	72261160-1	**Նախաբան** Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների սպասարկումը իրականացվելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում: Նախագծի շահառու կողմ է հանդիսանում Ծառայությունը, որը պետք է իրականացնի պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի մշակումն ապահովող ծրագրային գործիքի և նրա ենթահամակարգերի հետագա արտադրական շահագործումը: **Անհրաժեշտությունը** Ներկայումս պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի մշակումն ապահովող ծրագրային գործիքը (այսուհետ՝ «Էլ.կենսաթոշակ» համակարգը) իր ենթահամակարգերով շահագործվում է Ծառայության աշխատակազմի կառուցվածքային, 51 տարածքային ստորաբաժանումներում և 01.01.2018 թվականից սկսած հետևյալ մարմիններում՝ ՀՀ պաշտպանության նախարարություն, ՀՀ ոստիկանություն, ՀՀ ազգային անվտանգության ծառայություն, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայություն, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչություն և ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն (այսուհետ՝ Համապատասխան մարմիններ): «Էլ.կենսաթոշակ» համակարգը կենտրոնացված, մեկ ընդհանրական տեղեկատվական շտեմարանի վրա հիմնված համակարգ է և իրականացնում է կենսաթոշակների, պետական նպաստների, պատվովճարի, պարգևավճարների, դրամական օգնության և Ծառայության կողմից վճարվող գումարների այլ վճարատեսակների նշանակում, վերահաշվարկ, իրավունքի դադարեցում և վերականգնում, վճարումների դադարեցում և վերսկսում, վճարման ցուցակների կազմում (ձևավորում), տպագրում և գումարների հատկացման հետ կապված ողջ գործընթացի կառավարում, ինչպես նաև կատարված վճարումների և փոխադարձ ակտերի հաշվառում, գրանցում և այլն: Պետական նպաստը պետական բյուջեի միջոցներից պարբերաբար	դրամ	42000000	1	Ք.Երևան, Նալբանդյան 13	**Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև՝ 14.12.2018թ**

		կամ միանվագ տրամադրվող դրամական օգնություն է, որի տրամադրման նպատակն է՝ անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացման օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելը, ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի մասնակի հատուցումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումը և սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը: Պետական նպաստները վճարվում են սոցիալական բնագավառում << կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ պետական նպաստների վճարման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած և (կամ) << կառավարության լիազորած այլ կազմակերպությունների միջոցով: Հաշվի առնելով, որ «Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը սահմանելու, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» << կառավարության որոշման համաձայն 2014 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո ծնված երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակում և վճարում է Ծառայությունը՝ իր տարածքային բաժինների միջոցով, ինչպես նաև այն հանգամանքը, որ 2016 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել «Հաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու և վճարելու կարգը հաստատելու մասին» << կառավարության որոշումը և ապահովելով «Պետական նպաստների մասին» << օրենքի 27-րդ և 28-րդ հոդվածներով նախատեսված գործառույթների իրականացումը և ավտոմատացումը մշակվել, ներդվել և Ծառայությունում են շահագործվում՝ «Երեխաների ծննդյան միանվագ նպաստ», «Մայրության նպաստ» և «Խնամքի նպաստ» տեղեկատվական ենթահամակարգերը: Հարկ է նշել, որ «Երեխաների ծննդյան միանվագ նպաստ», «Մայրության նպաստ» և «Խնամքի նպաստ» տեղեկատվական ենթահամակարգերի մշակումը իրականացվել է հաշվի առնելով նրանց ինտեգրելիությունը գործող «Էլ.կենսաթոշակ» համակարգին: Հաշվի առնելով << կառավարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 1135-Ն որոշման պահանջները 2018 թվականի հունվարի 1-ից Համապատասխան մարմինների զինծառայողներին (նրանց հավասարեցված անձանց) և նրանց ընտանիքների անդամներին կենսաթոշակ և պարգևավճար նշանակելու (վերահաշվարկելու) և վճարումն ապահովելու՝ վճարման ցուցակները վճարող կազմակերպություններին տրամադրելու համար անհրաժեշտ գործառույթներն իրականացվելու են «Էլ.կենսաթոշակ» համակարգ ներառված՝ 15.12.2017 թվականի դրությամբ Համապատասխան մարմինների տվյալների շտեմարաններում առկա տեղեկատվության համաձայն: << պաշտպանության նախարարության համակարգի կենսաթոշակառուի կենսաթոշակը կանխիկ եղանակով վճարվելու է «Հայփոստ» ՓԲ ընկերության միջոցով: Կենսաթոշակի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի N 668-Ն որոշմամբ սահմանված՝ պարգևավճարի նշանակման, կենսաթոշակի կամ պարգևավճար ստանալու իրավունքի վերականգնման, վճարման վերսկսման դիմումները (բացառությամբ զինվորական կենսաթոշակը վերահաշվարկելու վերաբերյալ դիմումների, որոնք Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 23-ի N 1328-Ն որոշման					

		համաձայն՝ ներկայացվելու են համապատասխան մարմնի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում և մշակվելու են տվյալ մարմնի կողմից) կարող են ներկայացվել նաև Ծառայության աշխատակազմի ցանկացած տարածքային բաժին՝ անկախ այն հանգամանքից, թե՛որ Համապատասխան մարմնի զինծառայող է համարվել դիմումատուն կամ որտեղ է գտնվում նրա կենսաթոշակի կամ պարգևավճարի գործը: Ծառայության աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների կողմից ընդունված դիմումները մշակվելու են համապատասխան մարմնի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման կողմից: Նշված դիմումներն ընդունելիս դիմումի համապատասխան դաշտում պետք է նշել (ընտրել) տվյալ մարմնի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանման անվանումը՝ «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգի միջոցով, ինքնաշխատ եղանակով դիմումի մշակման հետագա ընթացքն ապահովելու համար: Այսուհետ, այս փաստաթղթում «Համակարգ» անվանելով կհասկանանք պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանի մշակումն ապահովող ծրագրային գործիքը իր ենթահամակարգերով: Համակարգը իրականացնում է՝ • օրենսդրության միասնական կիրառման ապահովումը. • քաղաքացիների իրավունքների ապահովումը. • գերատեսչությունների փոխգործելիության ապահովումը. • տեղեկատվության փոխանակման ապահովումը. • միասնական տեղեկատվական Համակարգի ու շտեմարանի ստեղծումը և վարումը. • ներկայացված և մուտքագրված փաստաթղթերի հիման վրա էլեկտրոնային գործի ստեղծումը. • ներկայացված բնօրինակ փաստաթղթերի տեսաներածման, պահպանման և էլեկտրոնային գործին կցելու ապահովումը. • վերահսկողական համապատասխան իրավասություններ ունեցող պատասխանատուների կողմից կենսաթոշակի գործի հետ կատարված յուրաքանչյուր գործարքի կապակցությամբ իրականացված որոշումների հաստատումը կամ մերժումը. • կենսաթոշակների և պետական նպաստների և այլ վճարատեսակների նշանակումը, վերահաշվարկը, իրավունքի դադարեցումը և վերականգնումը, վճարումների դադարեցումը և վերսկսումը. • զինծառայողներին (նրանց հավասարեցված անձանց) և նրանց ընտանիքների անդամներին կենսաթոշակ և պարգևավճար նշանակելու (վերահաշվարկելու) և վճարումն ապահովելու՝ վճարման ցուցակները վճարող կազմակերպություններին տրամադրելու համար համապատասխան գործառույթներ, • երեխայի ծննդյան միանվագ նպաստ, մայրության նպաստ, մինչև երկու տարեկան երախայի խնամքի նպաստ նշանակելու և վճարելու կամ մերժելու որոշումներ կայացնելու գործընթացի ավտոմատացումը, այդ որոշումների տեղեկատվական ապահովումը. • դիմումով ներկայացված և մուտքագրված տվյալների առցանց օգտագործումը.					

		• Ծառայության աշխատակազմի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների շահագործողների հստակ սահմանված դերերով աշխատանքի ապահովումը՝ ըստ իրենց տրամադրված իրավասությունների շրջանակի. • վճարման ցուցակների կազմումը, ձևավորումը, ֆայլերի ստացումը, տպագրումը և գումարների հատկացման հետ կապված ողջ գործընթացի կառավարումը. • կատարված վճարումների և փոխադարձ ակտերի հաշվառումը, գրանցումը և պահպանումը. • տարաբնույթ հաշվետվությունների, տեղեկանքների կամ վիճակագրական տվյալների ստացումը, ձևավորումը և տպագրումը. • տվյալների որոնումը, խմբավորումը և ֆիլտրումը: Նոր օրենքների, օրենսդրական ակտերի և ՀՀ կառավարության որոշումների ի հայտ գալու պարագայում առկա Համակարգի հիմնական տարբերակում նախատեսվում է իրականացնել համապատասխան փոփոխություններ: **Նպատակը** Սույն տեխնիկական բնութագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել առկա Համակարգի հիմնական տարբերակի արտադրական շահագործման ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծման և Համակարգի հիմնական տարբերակի սպասարկման համար անհրաժեշտ ծրագրային ապահովման աշխատանքներ: **Համակարգի սպասարկման աշխատանքներին ներկայացվող հիմնական պահանջները** Սպասարկման ծառայություն մատուցող ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) Համակարգի սպասարկման աշխատանքները պետք է իրականացնի կապի կենտրոնական համակարգի՝ Readmine-ի միջոցով, որը հնարավորություն է ընձեռում ինքնաշխատ եղանակով հաշվառված ի հայտ եկած ծրագրային խնդիրները, Համակարգի չնախատեսված անհրաժեշտ փոփոխությունները և հիմնական տարբերակների սպասարկման համար նախատեսվող աշխատանքները փոխանցել (ուղարկել) սպասարկման ծառայություններ մատուցող համապատասխան Ընկերություն տրամադրած էլեկտրոնային փոստի հասցեներով՝ հաշվառված աշխատանքի կատարումն ապահովելու նպատակով: Ընկերությունը Համակարգի սպասարկման աշխատանքները համակարգելու և իրականացնելու նպատակով պետք է հատկացնի ներկայացուցիչ՝ սպասարկման համակարգող գրավոր տրամադրելով Ծառայությանը նրա անունը, ազգանունը, հայրանունը, էլեկտրոնային փոստի հասցեն և հեռախոսահամարը: Սպասարկման համակարգողը պետք է՝ • Համակարգի շահագործման ընթացքում առաջացած տեխնիկական հարցերի վերաբերյալ տրամադրի խորհրդատվություն (հեռախոսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով). • Իրականացնի Ծառայության աշխատակազմի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումներում Համակարգի					

		շահագործման ընթացքում առաջացած և համակարգի «Հետադարձ կապ» բաժնի միջոցով ուղարկված տեխնիկական խնդիրների լուծում. • Այլ: **Աշխատանքների ներկայացում** Ծառայության Տեղեկատվական տեխնոլոգիաների և ռիսկերի կառավարման վարչությունը ի հայտ եկած խնդիրների, համակարգում չնախատեսված անհրաժեշտ փոփոխությունների և առկա Համակարգի հիմնական տարբերակի սպասարկման համար նախատեսվող աշխատանքները հաշվառում է Readmine համակարգում, որը հնարավորություն է ընձեռում ինքնաշխատ եղանակով այն փոխանցել (ուղարկել) Ընկերության կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով՝ հաշվառված աշխատանքի կատարումն ապահովելու նպատակով: **Աշխատանքների իրականացում** 1. Տվյալների բազաների պատճենահանում (database backup), վթարների դեպքում վերականգնում: 2. Տեղեկատվության պահպանման անվտանգության և գաղտնիության սկզբունքների ապահովում: 3. Այլ գերատեսչություններից և սոցիալական ոլորտում առկա տեղեկատվական շտեմարաններից ստացված տվյալների հասանելիության ապահովում Համակարգ: 4. ՀՀ կառավարության 713-Ն որոշման համաձայն բնակչության պետական ռեգիստրում հաշվառված քաղաքացիների և նրանց հաշվառման հասցեների մասին տվյալների ստացում, տվյալների օգտագործման համար ծրագրային միջոցի մշակում և ինտեգրում Համակարգ: 5. ՔԿԱԳ տեղեկատվական համակարգի տվյալների՝ ծննդյան և մահվան ակտերի վերաբերյալ, ստացում և օգտագործման համար ծրագրային միջոցի մշակում և ինտեգրում Համակարգ: 6. Մանկատների, ծերանոցների, հաշմանդամների տեղեկատվական տվյալների տրամադրման ծրագրային գործիքի մշակում և ինտեգրում Համակարգ: 7. Այլ տեղեկատվական շտեմարաններից (բնակչության պետական ռեգիստրից, ՔԿԱԳ-ից, ՀՀ ԿԱ ՊԵԿ-ից, սոցիալական այլ տեղեկատվական շտեմարաններից) ստացված տվյալների կիրարկման ապահովում: 8. Համակարգի շահառուների սպասարկման արդյունավետության բարձրացմանն ուղված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ծրագրային միջոցների կիրարկման ապահովում, մասնավորապես՝ a. Քաղաքացիների կողմից ներկայացված դիմումների և կից ներկայացված փաստաթղթերի հաշվառման ապահովում ՍԱՊԾ-ի ստորաբաժանումներում անկախ քաղաքացու հաշվառման հասցեից, դիմումատուին պատասխանի տրամադրում անկախ հաշվառման հասցեից, b. Առաջին կամ երկրորդ երեխայի ծննդյան նպաստի նշանակման դիմումի ընդունում առցանց ռեժիմով, նշանակում և վճարման					

		կազմակերպում, դիմումատուին դիմումի ընթացքի հետ կապված հաղորդագրությունների ուղարկում: 9. Նոր օրենքների, օրենսդրական ակտերի և ՀՀ կառավարության որոշումների ի հայտ գալու պարագայում առկա Համակարգի հիմնական տարբերակի համապատասխան փոփոխություններ: 10. Կենսաթոշակների նշանակման, հաշվարկման և վերահաշվարկման ավտոմատ ապահովում, ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան, մասնավորապես՝ a. Երեխաների ծննդյան նպաստի նշանակման ինքնաշխատ համակարգի աշխատանքի ապահովում, b. Չաշխատող մայրերին տրամադրվող նպաստի նշանակման ինքնաշխատ համակարգի աշխատանքի ապահովում, c. Խնամքի արձակուրդում գտնվող մայրերին տրամադրվող երեխայի խնամքի նպաստի նշանակման ինքնաշխատ համակարգի աշխատանքի ապահովում: 11. Նշանակված կենսաթոշակների և նպաստների իրավունքի դադարեցման և վերականգնման կիրարկման ապահովում համաձայն ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերին համապատասխան: 12. Նշանակված կենսաթոշակների և նպաստների վճարման ընթացքի ապահովում, ըստ վճարող գործակալությունների և վճարման եղանակների, մասնավորապես՝ a. Հայփոստի միջոցով «Կանխիկ» տեսակով վճարման ապահովման համար վճարման ցուցակների ստացման ապահովում, Հայփոստի վճարման ընթացքի վերահսկողության բարձրացման համար վճարման ցուցակների էլեկտրոնային տվյալների ձևավորում և տրամադրում, b. Բանկային համակարգի միջոցով «Կանխիկ» և «Անկանխիկ» տեսակներով վճարման համար էլեկտրոնային տվյալների ստացում և տրամադրում, c. ըստ վճարող գործակալությունների վճարման ընթացքի մասին տվյալների (ռեեստրների) հաշվառում տվյալների շտեմարան: 13. Նոր որոշումների ընդունման համար նախնական վերահաշվարկների կատարման ապահովում: 14. Սոցիալական այլ տեղեկատվական շտեմարաններին կենսաթոշակների մասին անհրաժեշտ տվյալների տրամադրման ապահովում: 15. Համակարգի հիմնական տարբերակի ընթացիկ սպասարկում, շահագործման ընթացքում ի հայտ եկած խնդիրների լուծում, խորհրդատվության տրամադրում, ինչպես նաև Ծառայության կողմից առաջադրված անհրաժեշտ աշխատանքների իրականացում՝ համաձայն Readmine համակարգում հաշվառված ժամկետների և առաջնահերթությունների: 16. Համակարգը շահագործող մասնագետների ուսուցում, ըստ պահանջի և անհրաժեշտության: 17. Համակարգի օգտվողի ձեռնարկի և Համակարգի տեխնիկական այլ փաստաթղթերի թարմացում (ըստ պահանջի և անհրաժեշտության):					

		Իրականացված աշխատանքների ընդունում Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ Ընկերությունը Ծառայություն է ներկայացնում հաշվետվություն՝ ուղեկցող նամակով, և տվյալ ամսվա ընթացքում ստացված արդյունքներով (անհրաժեշտության դեպքում նաև արտաքին կրիչով), իսկ առնչվող փաստաթղթերը՝ թղթային տարբերակներով: Ծառայությունից ստացված դրական եզրակացության հիման վրա Ընկերությունը Ծառայություն է ներկայացնում հանձնման – ընդունման արձանագրությունը, հարկային հաշիվը և ակտը երկուական օրինակներով:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության
պետական ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900001[illegible]56652

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի օր. 2-րդ շենք, բն 28
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 163018219838
[illegible]6157

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 2
« 15 » « 02 » 2018 թ. կնքված
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ – 18/4 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

h/h	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Ծառայության դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	72261160-1	ծրագրային ապահովման սպասարկման ծառայություններ	-	7001400	7001400	17501400	17501400	17501400	28001400	28001400	28001400	42000000	42000000	42000000	42000000

/Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով,

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության
պետական ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900001156652

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Կրտսեր Ալեքսանյան և որդիներ» ՍՊԸ
ք. Երևան, Շիրակի օք. 2-րդ շենք, բն 28
«Հայէկոնոմբանկ» ՕՐՐ Շենգավիթ մ/ճ
Հ/Հ 1630182108
ՀՎՀՀ 02230157

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« 15 » « 02 » 2018 թ. կնքված
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ – 18/4 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

§ ¦§ ¦ 20 Ã.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. դուրս գրած N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« 15 » « 02 » 2018 թ. կնքված
ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ՄԱԾՁԲ – 18/4 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«ՀԱՅՀԵՂԻՆԱԿ»
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԿՈԼԵԿՏԻՎ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ
ԿԱՌԱՎԱՐՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

"ARMAUTHOR"
Non-governmental collective management organization of authors' rights and related right

"АРМАВТОР"
Общественная организация по коллективному управлению авторскими и смежными правами

No-07/ 94
20.03.2013թ.

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏԻ Ի ՊԱՀ ՀԱՆՁՆՈՒՄ

«Հայհեղինակ» հեղինակների իրավունքների պաշտպանության կազմակերպության կողմից ի պահ է վերցվում ստորև նշված ստեղծագործությունը (հիմք՝ «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օր., 3-րդ հոդված): Ի պահ հանձնված ստեղծագործության վերաբերյալ տեղեկություններն ընդգրկված են «Հայհեղինակ» -ի տվյալների բազայում:

Ստեղծագործության անվանումը– «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ»

Ստեղծագործության բնութագիրը – համակարգչային ծրագիր

Հեղինակների ԱԱՀ -	ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ ՄԻՍԱԿԻ
Հասցե -	ք. Երևան, Շիրակի 2-րդ օբ.,բն.28
Հեռ -	/091/ 26-03-63
Անձնագիր-	AE 0565894, 008, 04.07.2000թ.
	ԴՈՒԿԱՍՅԱՆ ԱՆԴՐԱՆԻԿ ԳՐԻՇԱՅԻ
Հասցե -	ք. Երևան, Նոր-Նարքի 7-րդ զ.շ. 4, բն.39
Հեռ.-	/ 093 / 90-10-90
Անձնագիր -	AG 0239058, 005, 21.03.2011թ.
	ԱՐԱՄՅԱՆ ՆԱՐԵԿ ՌՈՒԲԵՆԻ
Հասցե -	ք.Նոր-Հաճն, Անդրանիկի 4, բն.7
Հեռ.-	/ 093 / 05-88-15
Անձնագիր -	AG 0437668, 046, 27.05.2005թ.

Հեղինակները հավաստում են, որ իրենք հանդիսանում են նշված ստեղծագործության հեղինակները, ինչպես նաև, որ ներկայացված տեղեկությունները ճշգրիտ են, համապատասխանում են իրականությանը և այլ անձանց հեղինակային իրավունքներն իրենց կողմից չեն խախտվել:

Որևէ անձ, ով գիտակցաբար կեղծիք է թույլ տալիս նյութը ի պահ հանձնելու ընթացքում, կենթարկվի պատասխանատվության օրենքով սահմանված կարգով /հիմք՝«Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենք, հոդ. 65-69/:

Ի պահ հանձնման համարը – 08/ 2801
Օրը, ամիսը, տարեթիվը - 19.03.2013թ

ՏՆՕՐԵՆ Ս. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Հայաստանի Հանրապետություն, 0009 Երևան, Կորյունի փող. 19ա: Հեռ. 52 63 93, Հեռ/Ֆաքս. 52 94 92
Республика Армения, 0009 Ереван, ул. Корюна, 19а. Тел. (+374 10) 52 63 93. Факс: (+374 10) 52 94 92
19a Koryun str., 0009 Yerevan, Republic of Armenia. Tel.: (+374 10) 52 63 93. Tel/ Fax: (+ 374 10) 52 94 92
E-mail: international@armauthor.am, info@armauthor.am

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ No
20.03.2013թ

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ» ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԲԱՑԱՌԻԿ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԿՐՏՍԵՐ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԵՎ ՈՐԴԻՆԵՐ ՍՊԸ - ը /այսուհետև՝ Գործատու/, որը գործում է 2004թ. Հուլիսի 30-ին ՀՀ Պետական Ռեգիստրի Կենտրոնական մարմնի կողմից գրանցված իր Կանոնադրությանը համապատասխան /վկայական թիվ ՕՅԱ No 065927/, ի դեմս Տնօրեն Գ.Ալեքսանյանի, մի կողմից եւ ՍՊԸ-ի աշխատակից տնօրեն Գագիկ Միսակի Ալեքսանյանը, մյուս կողմից /այսուհետև՝ հեղինակ/, միասին կոչվեցին կողմեր, և կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Հեղինակը Գործատուին բացառիկ իրավունքի սկզբունքով փոխանցում է <ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ> ծրագրային համակարգը օրենքով նախատեսված պայմաններով օգտագործելու համար:
1.2. Գործատուն պարտավորվում է Հեղինակին աշխատավարձ վճարել համապատասխան պայմանագրով նախատեսված չափով և կարգով:
1.3. Հեղինակը երաշխավորում է, որ հանդիսանում է Օբյեկտի նկատմամբ հեղինակային իրավունքի իրավատերը, և չի խախտել երրորդ անձանց իրավունքը:
1.4. Սույն Պաւմանագիրն իր գործողությունը պահպանում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Համաձայն սույն պայամանագրի, Հեղինակի կողմից Գործատուին են փոխանցվում Համակարգի նկատմամբ բոլոր գույքային իրավունքները՝
ա) համակարգն օգտագործել գործատուի նախընտրած անվանման ներքո,
բ) իրակլսնացնել համակարգի վերարտադրությունը.
2.2 Պատվիրատուն համակարգն օգտագործելու ընթացքում պարտավորվում է պահպանել հեղինակի՝ անձնական ոչ գույքային իրավունքները և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պաշտպանել համակարգն այլ անձանց ապօրինի օգտագործումից:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3.1. Սույն պայմանագրով իր պարտավորությունները չկատարած կամ ոչ պատշաճ կատարած Կողմը հատուցում է մյուս կողմին դրանով պատճառված վնասները:
3.2. Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով շահույթ ստացած Կողմը պարտավոր է մյուս Կողմին վնասների հետ մեկտեղ հատուցել նրա բաց թողնված օգուտը ստացվւսծ եկամուտներից ոչ պակաս չափով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ և ՓՈՓՈԽՈՒՄԸ

4.1. Փոխադարձ գրավոր համաձայնության դեպքում Կողմերը կարող են վաղաժամ լուծարել սույն պայմանագիրը:
Հեղինակն իրավունք ունի լուծելու պայմանագիրը գործատուի կողմից Հեղինակին սույն պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված վարձատրությունը չվճարելու դեպքում:

4.2 Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները պետք է կատարվեն գրավոր և պատշաճ ձևով ստորագրվեն Կողմերի կողմից:

5. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Բոլոր վեճերը և տարաձայնությունները, որոնք կապված են Կողմերի՝ սույն Պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման հետ, լուծվում են բանակցությունների միջոցով:
5.2 Բանակցությունների միջոցով վեճը չլուծելու դեպքում, վեճը լուծվում է դատական կարգով՝ դատարանի կողմից :

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1. Բոլոր այն հարցերը, որոնք կարգավորված չեն սույն Պայմանագրով, կարգավորվում են ՀՀ օրենսդրությանը համապատասխան:
6.2 Սույն պայմանագրի կատարման ընթացքում ծանուցումները Կողմերը միմյանց պետք է ուղարկեն գրավոր:
6.3 Սույն Պայմանագիրը կազմված է 2 հավասարազոր օրինակներից, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

7. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅԻՆՆԵՐԸ

ԳՈՐԾԱՏՈՒ	ՀԵՂԻՆԱԿ
Կրտսեր Ալեքսանյան ու որդիներ ՍՊԸ-ի տնօրեն Գ.Մ.Ալեքսանյան Երևան, Շիրակի փողոս, 2-րդ օբեկտ բն 28 Հայէկոնոմ բանկ, հ/հ **163018219838** ----------	Կրտսեր Ալեքսանյան ու որդիներ ՍՊԸ-ի տնօրեն Գ.Մ.Ալեքսանյան Երևան, Շիրակի փողոս, 2-րդ օբեկտ բն 28 Նույանականացման քարտ 001377878 տրված 08.01.2013թ 001-ի կողմից ----------